

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՆՔԵՐ

ԿՈՂՈՒՑ ՎԱՆՔ

ՊԱՏՄԱԿԱՆ. — Կողուց վանքը կը գտնուէր Արծկէ քաղաքին մօտ, ունէր հեղղեցի մը՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ տնունով։

Կողուց վանքի առաջնորդներէն միշտն մէկ երկուքին անունները յիշատակուած են. այսպէս,

1. — Մելքոնիք, 1428. — Այդ շրջանին խումբ մը աշակերտներ կ'ուսանէին վանքին մէջ, բարունապետ Յակոբի և եղբօրը Անդրէասի ձեռքին տակ։ Կը յիշուին տասնետկ մը անուններ։

Յովհաննէս,

Յովհաննէս Դադարոսսենց,

Միսիթար,

Մարտիրոս,

Հայրապետ,

Մարտիրոս,

Դանիէլ փակակալ,

Ներսէս փիլիսոփայ,

Մկրտիչ,

Թումաս. — Յիշատակարոնք Ժերի, Ա. Մասն, էջ 381։

Կողուց վանքի խումբ մը միտքանաներու յիշատակութեան կը հանդիպինք 1452 թուին. այսպէս,

Յովհաննէս Վարդապետ,

Տէր Դանիէլ,

Սարգիս Արեղայ,

Տէր Յովհաննէս. — Յիշատակարոնք Ժերի, Ա. Մասն, էջ 26։

2. — Դանիիկ, 1497. — Յիշատակարոնք Ժերի, Գարի, Գ. Մասն, էջ 243։

ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ. — Կողուց վանքին մէջ գրչագրական աշխատանքը փոքր չափավ միայն իրազործուած է. ծանօթ են հետեւալ քանի մը գրիչները, որ յիշեալ վանքին մէջ պարտապած են ձեռագիրներու ընդօրինակութեամբ։

Ա. — Կարապետ Արեղայ. Գրիչ, որդի Խաչատրուի, աշակերտ՝ Արբահամի որդի Թումայ Կրօնաւորի. 1428ին օրինակած է Կողուց վանքին և Արծկէ քաղաքին մէջ Ասլիխոր-Տօնական մը, Սաղաթէլի որդի Պարոն Մկրտիչի համար. — Յիշա. Ժերի, Գ. Մասն, թիւ 403. Զեռ. Վիշնայի Միթթարեանց, թիւ 224։

Բ. — Վարդան Արեղայ, Գրիչ, 1452-1461, որդի Ստեփանոսի. օրինակած է,

1. — Աւետարան, 1452ին, Ներսէս քահանայի որդի Արծկէցի Յակոբ Արեղային հոմար. — Զեռ. Երեանի, թիւ 8925։

2. — Աւետարան, 1461ին, Սիոն միտքացի խոնդրանքով. Քարտի Կոկոլ՝ Սարգիս Արեղայ. — Յիշա. Ժերի, Բ. Մասն, թիւ 202։

Գ. — Մատթէոս Արեղայ, Գրիչ, 1497-1503, որդի Կարապետի. օրինակած է,

1. — Աւետարան, 1497ին, Պարոն Գորդոնուտրոջ համար. — Զեռ. Երեանի, թիւ 3530։

2. — Աւետարան, 1503ին, Ասոմի որդի Դանիէլի համար. — Յուցակ Զեռ. Մշոյ, 1967, Երեանզէմ, էջ 134-135։

Ն. Արթ. Միկայան

նակ հասուսցէ. և ողջ լեռ ի Տէր և ի պարծանս զգածեալ ծերոյս Գրիգոր իրը պետի. որ յեւն նոյեմբերի զգիրս ծրեցի բաւ է։

Սէր իմ աստուծոյ համար. զերուսաղէմայ բանն ամուջոյի ձեռօք տուր հոգաւ. թէ զիմ խորին կամիս.

(Կ6իթ)